

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

30 սեպտեմբերի 2017 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության Դատարանի Մեծ կոլեգիան հետևյալ կազմով.

Նախագահող՝ Ֆեդորցով Ա.Ա.,

զեկուցող դատավոր՝ Սկրիպկինա Գ.Ա.

դատավորներ՝ Աժիբրաիմովա Ա.Մ., Այրիյան Է.Վ., Բաիշև Ժ.Ն., Կոլոս Դ.Գ., Նեշատանա Տ.Ն., Սկրիպկինա Գ.Ա., Թումանյան Ա.Է.,

Չայկա Կ.Լ.,

դատական նիստի քարտուղար Նազարովա Բ.-ի

ներկայությունամբ, ուսումնասիրելով գործի նյութերը,

լսելով զեկուցող դատավորին,

դեկավարվելով Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնադրոշան 46-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ, 72-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

ներկայացնում է հետևյալ խորհրդատվական եզրակացությունը 2014 թվականի մայիսի 29-ի՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի դրույթների մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի վերաբերյալ:

I. Դիմողի հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ դիմող, Հանձնաժողով) դիմել է Եվրասիական տնտեսական միության Դատարան (այսուհետ՝ Դատարան) 2014 թվականի մայիսի 29-ի՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 29-րդ հոդվածի դրույթները պարզաբանելու մասին դիմումով:

Դիմումի մեջ նշված է, որ Հանձնաժողովի կողմից Եվրասիական տնտեսական Միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող՝ Միության ներքին շուկայում գործունեությունն առնչվող միջազգային պայմանագրերի կատարման մշտադիտարկման և վերահսկողության իրականացման ընթացքում հայտնաբերվել են Պայմանագրի 29-րդ հոդվածի դրույթների մեկնաբանման ու կիրառման վերաբերյալ Միության անդամ պետությունների տարբեր մոտեցումներ՝ ապրանքների փոխադարձ առևտրում սահմանափակող միջոցների ներդրման մասով, այն է.

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____



Казарцева О.М.

1) այն մոտեցումը, ըստ որի՝ Միոլթյան անդամ պետությունների կողմից ապրանքների փոխադարձ առևտրում սահմանափակող միջոցների կիրառումը հնարավոր է Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերով՝ միայն նման ապրանքների առկայության դեպքում կամ Պայմանագրին, Միոլթյան շրջանակներում միջազգային պայմանագրերին (Պայմանագրի 29-րդ հոդվածի 3-րդ կետ) համապատասխան սահմանված՝ Միոլթյան մաքսային տարածքում նման ապրանքների փոխադրման կամ շրջանառության առանձին կարգին համապատասխան:

2) այն մոտեցումը, որը ենթադրում է (թույլ է տալիս) ապրանքների փոխադարձ առևտրում Միոլթյան անդամ պետությունների կողմից սահմանափակող միջոցների ներդրման հնարավորություն՝ մինչև Պայմանագրին, Միոլթյան շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան սահմանված՝ Միոլթյան մաքսային տարածքում նման ապրանքների փոխադրման կամ շրջանառության առանձին կարգի սահմանում՝ միակ պայմանով՝ Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

Յանձնաժողովը խնդրում է Դատարանին խորհրդատվական եզրակացություն տալ Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառման հարցով, այդ թվում՝ Պայմանագրի նույն հոդվածի 3-րդ կետի հետ փոխկապվածությամբ:

II. Դատարանի իրավասություններ

Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնադրության 46-րդ կետին համապատասխան, որը Պայմանագրի № 2 Յավելվածն է (այսուհետ՝ Դատարանի Կանոնադրություն), Դատարանը՝ Եվրասիական տնտեսական միության մարմնի դիմումով իրականացնում է Պայմանագրի, Միոլթյան շրջանակներում միջազգային պայմանագրերի ու Միոլթյան մարմինների որոշումների դրույթների պարզաբանում (այսուհետ՝ պարզաբանում):

Դատարանի իրավասությունը Յանձնաժողովի հայցած խորհրդատվական եզրակացության կայացման նկատմամբ սահմանվել է նշված նորմի հիման վրա Դատարանի՝ Պայմանագրի դրույթների պարզաբանման մասին դիմումը վարույթը նդունելու մասին 2017 թվականի հունիսի 12-ի որոշմամբ:

III. Ընթացակարգը Դատարանում

Համաձայն Դատարանի Կանոնադրության 68-րդ կետի, պարզաբանման մասին գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնակարգով, որը հաստատվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի № 101 որոշմամբ (այսուհետ՝ Դատարանի Կանոնակարգ):

Դատարանի Կանոնադրության 73-րդ կետը նախատեսում է, որ Դատարանը պարզաբանման մասին գործերը քննում է Դատարանի Մեծ կոլեգիայի նիստերին:

Դատարանի Կանոնակարգի 75-րդ հոդվածի կարգով պարզաբանման մասին գործը քննությանը նախապատրաստելու շրջանակներում հարցումներ են ուղարկվել Յանձնաժողովի, Միոլթյան անդամ պետությունների կառավարությունների, Յանձնաժողովի դիմումի մեջ նախանշված հարցերն

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____

Казарцева О.М.

նուսումնասիրող գիտական հաստատությունների հասցեով ու պատասխաններ ստացվել Յայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությանը, Բելառուսի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը, Ղրղզստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը, Ռուսաստանի Դաշնության Արդարադատության նախարարությանը, Յայաստանի Հանրապետության Գիտության ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտից, Բելառուսի Հանրապետության Օրենսդրության և իրավական հետազոտությունների ազգային կենտրոնից, Ղրղզստանի Հանրապետության Գիտության ազգային ակադեմիայի Էկոնոմիկայի ինստիտուտից, Ղազախստանի Հանրապետության Օրենսդրության ինստիտուտից, Ռուսաստանի Դաշնության Տնտեսական զարգացման նախարարության Արտաքին Առևտրի Համառուսական Ակադեմիայից:

Հանձնաժողովը Դատարանի հարցմամբ տրամադրել է լրացուցիչ փաստաթղթեր, Հանձնաժողովի խորհրդի և Կոլեգիայի նիստերի նյութեր, որոնց ընթացքում քննարկվել են Պայմանագրի՝ ապրանքների ներքին շուկայի գործունեությանն առնչվող դրույթների կիրառման հարցեր:

IV. Դատարանի եզրակացությունները

Դատարանը Կանոնադրության 50-րդ կետին համապատասխան՝ արդարադատությանը ներկայանացնելիս կիրառում է.

միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը.

պայմանագիրը, միջազգային պայմանագրերը՝ Միության շրջանակներում՝ և այլ միջազգային պայմանագրեր, որոնց մասնակիցն են հանդիսանում վեճի կողմ պետությունները.

Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները.


միջազգային ավանդույթը՝ որպես իրավական նորմ ճանաչված համընդհանուր պրակտիկայի ապացույց:

Մեծ կոլեգիան նաև նշում է, որ, հաշվի առնելով 1969 թվականի մայիսի 23-ի՝ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթները, պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն, համապատասխան իր սովորական նշանակությանը, որը պետք է հաղորդել պայմանագրի տեքստի ներքին՝ վերջիններիս համատեքստում, ինչպես նաև պայմանագրի օբյեկտի ու նպատակների լույսի ներքո:

Դատարանը պետք է պարզաբանի Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, այդ թվում՝ Պայմանագրի նույն հոդվածի 3-րդ կետի հետ փոխկապվածությամբ:

Դիմողի, Միության անդամ պետությունների՝ ի դեմս վերջիններիս լիազորված մարմինների, գիտահետազոտական հիմնարկների դիրքորոշումները, որոնք առկա են գործի նյութերում, ցույց են տալիս, որ առկա գոյություն ունեն Պայմանագրի 29-րդ հոդվածի համապատասխան դրույթների ըմբռնման տարբեր իրավական մոտեցումներ, որոնք այս կապակցությամբ ենթակա են Դատարանի Մեծ կոլեգիայի պարզաբանման:

1. Ելնելով դիմումի մեջ բարձրացված հարցի էությունից, Մեծ կոլեգիան կարծում է, որ պարզաբանման համար ներկայացված՝



Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____ Казарцева О.М.

Պայմանագրի 29-րդ հոդվածը վերաբերում է 6-րդ բաժնին՝ «Մաքսային միության գործունեությունը», և բացառություններ պարունակում ապանքների ներքին շուկայի գործունեության ընդհանուր կարգից, ապա այս նորմի պարզաբանումը պետք է իրականացվի Պայմանագրի հիմնարար դրույթների, մաքսային միության, ներքին շուկայի գործունեության հարցերը կարգավորող նորմերի, այն է՝ պայմանագրի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 25-րդ, 28-րդ հոդվածների հետ համակարգային կապի մեջ:

Ինչպես հետևում է Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետի դրույթներից, հիմնված էվրասիական տնտեսական միության շրջանակներում ապահովվում է ապանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի տեղաշարժի ազատություն, Պայմանագրով և Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսության ոլորտներում համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության վարում:

Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետի և 2-րդ հոդվածի բառացի ընթերցումը Մեծ կոլեգիային թույլ է տալիս նշել հետևյալը.

Պայմանագրի 1-ին հոդվածով սահմանված է, որ Միությանում իրականացվում է համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականություն, ինչը կանխորոշում է իրավական կարգավորման միատեսակության տարբերաստիճանը:

Որոշակի ոլորտը միասնական քաղաքականությանը դասելու համար պահանջվում է միասնականացված իրավական կարգավորման առկայություն, ինչպես նաև Միության անդամ պետությունների կողմից որոշակի ոլորտի իրավասության փոխանցումը Միության մարմիններին՝ վերջիններիս վերազգային լիազորությունների շրջանակներում:

Նման մոտեցում Միության Դատարանը կիրառել է Բելառուսի 3 անրապետության դիմումի հիման վրա 2017 թվականի ապրիլի 4-ին տրված խորհրդատվական եզրակացությունում:

Պայմանագրի 2-րդ հոդվածով սահմանված է, որ.

միասնական տնտեսական տարածությունը անդամ պետությունների տարածքներից կազմված տարածություն է, որտեղ գործում են տնտեսության կարգավորման միասնական (համադրելի) և միատեսակ մեխանիզմներ, որոնք հիմնված են շուկայական սկզբունքների և ներդաշնակեցված կամ միասնականացված իրավական նորմերի կիրառման վրա, և գոյություն ունի միասնական ենթակառուցվածք.

ընդհանուր (միասնական) շուկան Միության շրջանակներում տնտեսական հարաբերությունների ամբողջությունն է.

մաքսային միությունը անդամ պետությունների առևտրատնտեսական ինտեգրման ձևն է, որը նախատեսում է միասնական մաքսային տարածք, որի սահմաններում փոխադարձ առևտրում չեն կիրառվում մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր և հավաքագրումներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանիչ, հակագնացման և փոխհատուցման միջոցներ:

Պայմանագրի 3-րդ հոդվածը սահմանում է Միության անդամ պետությունների կողմից գործունեության իրականացման հիմնական սկզբունքները՝ միջազգային իրավունքի սկզբունքների նկատմամբ հարգանքի հիման վրա, ներառյալ անդամ պետությունների ինքնիշխան հավասարության և վերջիններիս տարածքային ամբողջականության. Կողմերի փոխշահավետ համագործակցության, իրավահավասարության, ազգային շահերի հաշվառման ապահովման. շուկայական տնտեսության և բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանման. անցումային

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____

Казарцева О.М.

շրջանների ավարտից հետո առանց բացառումների ու սահմանափակումների մաքսային միություն գործունեություն սկզբունքները:

Անդամ պետությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում Միություն կողմից վերջինիս գործառույթները կատարելու համար:

Պայմանագրի 4-րդ հոդվածով ամրագրվում են Միության հիմնական նպատակները՝ անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծում՝ վերջիններիս բնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակով. Միության շրջանակներում ապրանքերի, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորման ձգտում. գլոբալ տնտեսության պայմաններում ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացում, կոոպերացիա և մրցունակություն բարձրացում:

Համաձայն Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 5-րդ ենթակետերի, անդամ պետությունների մաքսային միություն շրջանակներում.

գործում է ապրանքների ներքին շուկա.

Միության անդամ պետությունների տարածքների միջև իրականացվում է ապրանքների ազատ տեղափոխում՝ առանց մաքսային հայտարարագրման և պետական վերահսկողության կիրառման, բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի:

2. Ինչպես հետևում է Պայմանագրի 28-րդ հոդվածի 2-րդ կետից, Միության տարածքում գործում է ներքին շուկա, որը ներառում է տնտեսական տարածություն, որում, Պայմանագրի դրույթներին համապատասխան, ապահովվում է ապրանքների, անձանց, ծառայությունների և կապիտալների ազատ տեղաշարժը:

Պայմանագրի դրույթների համակարգային իրավական վերլուծությունը Մեծ կոլեգիային թույլ է տալիս եզրակացնել հետևյալը:

Ներքին շուկայի ձևավորումը ժամանակակից ինտեգրացիոն միավորումների ստեղծման անբաժանելի մասն է և հիմնական նպատակներից մեկը, որոնց թվին է պատկանում նաև Եվրասիական տնտեսական միությունը, որտեղ միասնական քաղաքականություն է իրականացվում մաքսային կարգավորման ոլորտում (Պայմանագրի երկրորդ մաս, 5-րդ, 6-րդ բաժիններ):

Ներքին շուկայի գործունեությունը հիմնված է չորս սկզբունքի վրա.


- 1) ապրանքների տեղաշարժի ազատությունը.
- 2) անձանց տեղաշարժի ազատությունը.
- 3) ծառայությունների տեղաշարժի ազատությունը.
- 4) կապիտալների տեղաշարժի ազատությունը:

Մեծ կոլեգիան նշում է, որ Միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրում և ինտեգրացիոն գործընթացների արդյունավետությունում ապրանքների տեղաշարժի ազատության սկզբունքը կարևոր դեր է կատարում՝ խտրականության բացակայության և իրավունքի գերակայության հետմեկտեղ:

Միաժամանակ «ազատություն» տերմինը նշանակում է ոչ միայն գույքային սկամայն գործողություններ իրականացնելու ազատությունը, այլ և նման ազատության հետ կապված և Միության իրավունքում և Միության

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____ Казарцева О.М.



անդամ պետությունների ազգային ճրենսդրությունում ամրագրված իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը:

3. Պայմանագրի 28-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է ապրանքների ներքին շուկայի գործունեության ընդհանուր կանոն, որին համապատասխան՝ փոխադարձ առևտրում Միության անդամ պետությունները չեն կիրառում ներմուծման կարտահանման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր և հավաքագրումներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանիչ, հակազնագցման և փոխհատուցման միջոցներ՝ բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի:

Վերը նշված նորմերի վերլուծությունը Մեծ կոլեգիային թույլ է տալիս եզրակացնել, էր մաքսային միության գործունեության և ապրանքների ներքին շուկայի գործունեության ընդհանուր կանոնները միասնականացված են Պայմանագրի 25-րդ և 28-րդ հոդվածների շրջանակներում, այսինքն կարգավորված են Միության իրավունքով, և դրանք կարելի է դասել միասնական քաղաքականությանը (վերագրային կարգավորում):

4. Ներքին շուկայում ապրանքների առևտուրը սահմանափակող միջոցների կիրառումն ըստ ընդհանուր կանոնի արգելվում է, քանի որ դա հանգեցնում է ապրանքների տեղաշարժի ազատության սահմանափակմանը, որը կհակասի Միության գործունեության հիմնարար սկզբունքներին՝ շուկայական տնտեսության և բարեխիղճ մրցակցության սկզբունքների պահպանումը, մաքսային միության գործունեությունը՝ առանց բացառումների ու սահմանափակումների (Պայմանագրի 3-րդ հոդված), և Միության նպատակներից մեկին՝ Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորման ձգտումը (Պայմանագրի 4-րդ հոդված):

Միաժամանակ, Պայմանագրի 28-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է ներքին շուկայում ապրանքների տեղաշարժի սահմանափակումը ընդհանուր կանոնից բացառելու հնարավորություն: Նման բացառող միջոցներ նախատեսված են Պայմանագրի 29-րդ հոդվածով:

Մեծ կոլեգիան կարևոր է համարում, որ Պայմանագրի 29-րդ հոդվածի մեկնաբանումն իրականացվի Պայմանագրի 28-րդ հոդվածի 3-րդ կետի հետ համակարգային կապի մեջ, քանի որ երկու նորմերն էլ ուղղված են այնպիսի համակարգի ստեղծմանը, որի դեպքում պետության կողմից ներմուծման և արտահանման մաքսատուրքերի, ոչ սակագնային կարգավորման և այլ միջոցների կիրառման արգելքները կարող են խոչընդոտողաճանալ ներքին շուկայի գործունեության համար:

Պայմանագրի 29-րդ հոդվածն իր կառուցվածքով բաղկացած է երեք կետից: Այս հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջինիս՝ ներքին շուկայի գործունեության կարգի բացառություններ սահմանող դրոյթներով նախատեսվում է Միության անդամ պետությունների կողմից (ել նեկով միևնույն հիմքերից) բացառությունների երեք կատեգորիայի ներդրումը՝ իրավական կարգավորման համապատասխան տարբեր մեծիմներով:

Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետով կարգավորվում են փոխադարձ առևտրում միակողմ կարգով ներդրվող սահմանափակումների կիրառման հետ կապված իրավահարաբերությունները:

Պայմանագրի 29-րդ հոդվածի 2-րդ կետով կարգավորվում են Պայմանագրի 11-րդ բաժնով սահմանվող կարգով սանիտարական,

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____

Казарцева О.М.

անասնաբուժասանի տարական և կարձնտի նային բուսասանի տարական միջոցների ներդրման հետ կապված իրավահարաբերությունները:

Պայմանագրի նույն հոդվածի 3-րդ կետով կարգավորվում են Միության մաքսային տարածքում ապրանքների առանձին կատեգորիաների շրջանառության սահմանափակման հետ կապված իրավահարաբերությունները:

Մեծ կուլեգիան եզրակացնում է, որ Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը կարգավորում են բացառությամբ ներքին տարբեր տեսակներ, որոնք ունեն ներդրման (սահմանման) ինքնուրույն ընթացակարգեր:

Սանիտարական, անասնաբուժասանի տարական և կարանտինային բուսասանի տարական միջոցների ներդրումը կարող է տեղի ունենալ Պայմանագրի 11-րդ բաժնով սահմանվող կարգով (Պայմանագրի 29-րդ հոդվածի 2-րդ կետ):

Ապրանքների առանձին կատեգորիաների (թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր և դրանց պրեկուրսորներ, ծառայողական և քաղաքացիական զենքեր, օգոնային շերտը քայքայող նյութեր և այլն) շրջանառության սահմանափակումը, որոնց տեղաշարժի կամ շրջանառության կարգը Միության մաքսային տարածքում սահմանվում է Պայմանագրի, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան (Պայմանագրի 29-րդ հոդվածի 3-րդ կետ):

5. Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ Միության անդամ պետությունները ապրանքների փոխադարձ առևտրում իրավունք ունեն սահմանափակումներ կիրառել (այն պայմանով, որ նման միջոցները չեն հանդիսանում չարդարացված խտրականության միջոց կամ առևտրի քողարկված սահմանափակում) այն դեպքում, երբ նման սահմանափակումներն անհրաժեշտ են.


- 1) մարդու կյանքի և առողջության պաշտպանության համար.
- 2) հասարակական բարոյականության և իրավակարգի պաշտպանության համար.
- 3) շրջակա միջավայրի պաշտպանության համար.
- 4) կենդանիների ու բույսերի, մշակութային արժեքների պաշտպանության համար.
- 5) միջազգային պարտավորությունների կատարման համար.
- 6) երկրի պաշտպանության և անդամ պետության անվտանգության ապահովման համար:

Քննարկելով պահանջվող պարզաբանման նպատակով Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը՝ 6-րդ բաժնի՝ «Մաքսային միության գործունեությունը», հոդվածների հետ մեկտեղ, Մեծ կուլեգիան կարևոր է համարում այն սուբյեկտի սահմանումը, որը լիազորված է Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված սահմանափակումների ներդրման համար:

Պայմանագրի 2-րդ հոդվածը Պայմանագրում կիրառվող «անդամ պետություններ» հասկացությունը սահմանում է որպես Միության անդամ և Պայմանագրի 4-րդ մեր հանդիսացող պետություններ:

Համաձայն Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետի, «Միության անդամ պետությունները ապրանքների փոխադարձ առևտրում իրավունք ունեն սահմանափակումներ կիրառել ...»:

Համանման մի կառուցվածք օգտագործվել է նաև Պայմանագրի 6-րդ



բաժնի 28-րդ հոդվածի 3-րդ կետում («Ապրանքների փոխադարձ առևտրում անդամ պետությունները չեն կիրառում ...»), ինչպես նաև այլ բաժնիներում՝ ամբողջ Պայմանագրով մեկ, տարբեր ձևակերպումներով («անդամ պետությունները փոխադարձ ճանաչում են...») (Պայմանագրի 58-րդ հոդվածի 6-րդ կետ). «անդամ պետությունները իրավունք ունեն մշակել և ներդնել ժամանակավոր անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներ և միջոցներ այն դեպքում...» (Պայմանագրի 58-րդ հոդվածի 8-րդ կետ). «անդամ պետությունները միմյանց աջակցություն են ցուցաբերում...» (Պայմանագրի 68-րդ հոդվածի 1-ին կետ):

Մեծ կոլեգիան եզրակացնում է որ տվյալ համատեքստում Պայմանագրի նպատակների համար «անդամ պետություններ» հասկացության շրջանակներում դիտարկում է Միության յուրաքանչյուր անդամ պետությունն առանձին: Համանման միմոտեցում Դատարանն օգտագործել է Բելառուսի Հանրապետության դիմումով 2017 թվականի ապրիլի 4-ին խորհրդատվական եզրակացություն տրամադրելիս:

Մեկ այլ եզրակացություն է բխում Պայմանագրի 29-րդ հոդվածի 3-րդ կետի քերականական վերլուծությունից, որում նշված չէ սահմանափակման ներդրման սուբյեկտը, ամրագրելով տվյալ ձևակերպման մեջ, որ «...ապրանքների առանձին կատեգորիաների շրջանառությունը կարող է սահմանափակվել...»:

Այս դեպքում խոսքը ոչ թե յուրաքանչյուր պետության կողմից առանձին-առանձին ապրանքների առանձին կատեգորիաների շրջանառության սահմանափակման մասին է, այլ այն միջոցների, որոնք Միության անդամ պետություններն ընդունում են համատեղ՝ Միության շրջանակներում համապատասխան միջազգային համաձայնագրերի միջոցով:

6. Սա նշանակում է, որ Միության անդամ պետությունները ապրանքների փոխադարձ առևտրում իրավունք ունեն սահմանափակումներ կիրառել, որոնք կարող են ներդնել երկու պայմանով.

- նման միջոցները չեն կարող հանդիսանալ չարդարացված խտրականության միջոց կամ առևտրի սահմանափակման միջոց.

- նման սահմանափակումները անհրաժեշտ են Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետի 1-6 պարբերություններում նշված նպատակների համար:

Ինչպես և Պայմանագրի 29-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ապրանքների առանձին կատեգորիաների շրջանառության սահմանափակման դեպքում, Միության անդամ պետությունների միակողմ սահմանափակող միջոցները կարող են ուղղվել բացառապես Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետում նշված շահերից մեկի (կամ մի քանիսի) պաշտպանությանը:

7. Դատարանի Մեծ կոլեգիայի կարծիքով, ապրանքների ներքին շուկայի գործունեության, ապրանքների տեղաշարժի ազատության իրականացման վերը նշված նորմերն ու սկզբունքները համակողմանի և ճիշտ հասկանալու համար կարևոր գործնական նշանակություն ունի Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) իրավունքին դիմելը:

ԱՀԿ, Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ), Լատինական Ամերիկայի ինտեգրացիոն միավորումների (Մերկոսուր, Անդյան համայնք) իրավունքի աղբյուրների դրույթների համեմատական իրավական վերլուծությունը Մեծ կոլեգիային թույլ է տալիս եզրակացնել, որ Պայմանագրի 29-րդ

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____

Казарцева О.М.

հոդվածը համադրելի է ընդհանուր բացառությունների ինստիտուտի հետ՝ ԱՅԿ 1994 թվականի Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի 20-րդ, 21-րդ հոդվածների, Եվրոպական Միության գործունեության մասին պայմանագրի 36-րդ հոդվածի ռեՍիմպերատիվ պահանջների հայեցակարգի, Մերկոսուեր-ում և Անդյան համայնքում փոխադարձ առևտրում բացառություններ սահմանող նորմերի հետ:

Եվրոպական իրավական կարգավորման վերլուծությունը, ինչպես նաև Եվրոպական միության Դատարանի պրակտիկան այսպես են արտացոլում ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի բացառությունների նշանակությունը:

W. J. G. Bauhuis v The Netherlands State. (Case 46/76) գործում ԵՄ Դատարանը նշել է, որ ապրանքների տեղաշարժի ազատության սկզբունքի բացառություններն ամրագրող իրավական նորմը (Պայմանագրի 30-րդ հոդվածը, որը հիմնում է Եվրոպական միությունը (Յոնի պայմանագրի), ընդհանուր ամամբ համանման է ԵԱՏՄ մասին պայմանագրի 29-րդ հոդվածին), շեղում է ընդհանուր կանոնից, համաձայն որի՝ անդամ պետությունների միջև ապրանքների ազատ տեղաշարժի բոլոր խոչընդոտները պետք է վերացվեն, և այն պետք է մեկնաբանել սահմանափակությամբ:

Adriaan de Peijper (Case 104/75) գործում նշվում է, որ, չնայած Յոնի պայմանագրի 30-րդ հոդվածը սահմանում է Եվրոպական համայնքների իրավունքի ֆունդամենտալ սկզբունքի բացառություններ, վերջինիս հիման վրա ընդունվող ազգային միջոցները կարող են սահմանափակել առևտուրը միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է այդ միջոցների լեգիտիմ արդարացված նպատակներին հասնելու համար:

Այսպիսով, առանձնացվում է սահմանափակումների կիրառման թույլատրելիության երկու հիմնական պայման.

- ազգային միջոցի ընդունման նպատակը պետք է համապատասխանի արդարացնող հանգամանքներից մեկին (Միության իրավունքում՝ ԵԱՏՄ մասին պայմանագրի 29-րդ հոդվածի առաջին մասը).


- ազգային միջոցը չի կարող լինել անդամ պետությունների միջև առևտրում կամայական խտրականության կամ քողարկված սահմանափակման միջոց և պետք է լինի համաչափ:

8. Դիմելով համակարգային, Պայմանագրի 28-րդ հոդվածի դրույթների հետ փոխկապակցված վերլուծությանը, Մեծ կոլեգիան դիտարկում է Պայմանագրի 29-րդ հոդվածի 3-րդ կետում առկա հղումը 1-ին կետին որպես ներքին շուկայում ապրանքների շրջանառության այլ սահմանափակումների սահմանման հնարավորություն, բայց նույն հիմքերով:

Եվրասիական տնտեսական միությունում ապրանքների առանձին կատեգորիաների տեղաշարժի նկատմամբ գործում են միջարք միջազգային պայմանագրեր՝ համաձայնագրերի և արձանագրությունների ձևով (2013 թվականի հոկտեմբերի 24-Յամաձայնագիրը Մաքսային միություն մաքսային տարածքով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների փոխադրման կարգի մասին. 2015 թվականի մայիսի 20-ի Յամաձայնագիրը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև ծառայողական և քաղաքացիական գենքեր փոխադրելու մասին. 2015 թվականի մայիսի 29-ի Յամաձայնագիրը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների փոխադարձ առևտրի իրականացման ժամանակ օգոնային շերտը քայքայող նյութերի և դրանք պարունակող արտադրանքի փոխադրման և օգոնային շերտը

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____



Казарцева О.М.

քայլ քայլ ողնյու թերի հաշվառման մասին 10 այլ ն):

Այս կապակցությամբ հարկ է ընդունել միևնույն հիմքերի հիման վրա ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի երկու տեսակ բացառությունների գոյությունը.

1) որոնք ներդրվում են Միության անդամ պետությունների կողմից որպես բացառիկ միջոց՝ Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված հիմքերով.

2) որոնք ներդրվում են միջազգային պայմանագրերով՝ ապրանքների առանձին կատեգորիաների շրջանառության սահմանափակման համար՝ նույն հիմքերով, որոնք սահմանվել են Պայմանագրի 29-րդ հոդվածի է-ին կետով:

9. Հարկ է նշել, որ անդամ պետությունների կողմից միակողմ կարգով ժամանակավոր միջոցների կիրառման հարցերի կարգավորմանն առնչվող միանման հիմքերը (Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին մաս) երրորդ երկրների հետ առևտրի սահմանափակման միջոցներն են:

Երրորդ երկրների հետ առևտրում միակողմ բացառիկ միջոցների գնահատման մեխանիզմը սահմանվել է այն հիմքերով, որոնք նախատեսված են ԵԱՏՄ մասին պայմանագրի № 7 Հավելված հանդիսացող՝ Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակազնային կարգավորման միջոցների մասին արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 38-րդ կետով:

Հարկ է նշել, որ Արձանագրությունը համատեղ հիմքեր է պարունակում, որոնք առնչվում են Միության անդամ պետությունների կողմից բացառիկ դեպքերում միակողմ կարգով ժամանակավոր միջոցների կիրառման հարցերի կարգավորմանը, և համանման են Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցներին, սակայն վերջին դեպքում մեխանիզմը սահմանված է:

Արձանագրության 39-րդ կետով նախատեսված է, որ Արձանագրության 38-րդ կետում նշված միջոցները ներդրվում են Հանձնաժողովի որոշման հիման վրա և չեն կարող ծառայել որպես երրորդ երկրների կամայական կամ չհիմնավորված խտրականության, ինչպես նաև ապրանքների արտաքին առևտրի քողարկված սահմանափակման միջոց:

Արձանագրությանը համապատասխան՝ Միության անդամ պետության կողմից միակողմ կարգով նման միջոցների ներդրման դեպքում անդամ պետությունը անհապաղ տեղեկացնում է նման միջոցների ներդրման մասին Հանձնաժողովին, իսկ վերջինս իր հերթին՝ անդամ պետությունների մաքսային մարմիններին:

Մեծ կոլեգիան ու շադրոնություն է հրավիրում առայն, որ ապրանքների ազատ տեղաշարժի և ներքին շուկայի գործունեության պայմանների կատարման ապահովման նպատակով Միության անդամ պետությունները պետք է բարենպաստ պայմաններ ստեղծեն Միության կողմից իր գործառնայինները կատարելու համար և ձեռնպահ մնան այն միջոցներից, որոնք ի գործ են վտանգել Միության նպատակների իրագործումը, առավելագույնս խուսափեն փոխադարձ առևտրում միակողմ սահմանափակումներ ներդնելուց՝ ելնելով թափանցիկության, համարժեքության, համաչափության և օբյեկտիվ պայմանավորվածության սկզբունքներից, որոնք բխում են Պայմանագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից:

Ապրանքների փոխադարձ առևտրում Միության անդամ պետությունների կողմից կիրառվող սահմանափակումների նկատմամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը մշտադիտարկում է

Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____

Казарцева О.М.

իրականացնում:

Վիճելի հարցերի ծագման դեպքում կողմերը իրավունք ունեն
դիմելու եվրասիական տնտեսական միության Դատարանին:

10. Դատարանի Մեծ կոլեգիան, պատասխանելով դիմումատուի դրված
հարցերին, եզրակացնում է հետևյալը.

Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը ինքնուրույն
նորմատիվ դրույթներ են և չեն նախատեսում ուղղակի հետևողական
կիրառում:

Ընդ որում Միության անդամ պետությունների հայեցողությունը
Պայմանագրի 29-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ անվերապահ
չէ, ինչը կանխորոշված է ապրանքների փոխադարձ առևտրում
սահմանափակումների կիրառման պայմանների սահմանափակող
մեկնաբանմամբ:

V. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության կրկնօրինակն ուղարկել
դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի
պաշտոնական կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Ֆեդորցով

Դատավորներ՝

Ա.Մ. Աժիբրաիմովա

Է.Վ. Այրիյան,

Ժ.Ն. Բաիշև,

Դ.Գ. Կոլոս,

Տ.Ն. Նեշատանա,

Գ.Ա. Սկրիպկինա,

Ա.Է. Թումանյան,

Կ.Լ. Չայկա



Настоящий перевод с русского языка на армянский язык выполнен верно и полностью соответствует оригиналу.

Заместитель директора _____ Казарцева О.М.